

Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐՈՒՍԱՅԼԻ

Արքան և մեր նպատակն էր լով Աբուսահլի աւանդած ազգային յիշատակները հրատարակել, գրեթէ անհրաժեշտ հարկ եղաւ անոր ըսածները բացատրել կամ լրացնել, մանաւանդ իր նման և իր լեզուով գրողներով: Քաղաքն այլ բերաւ այսպիսի մի. մեր (գիւմայի երեսին) վերջին ծանօթութեան մէջ յիշեալ գրոց կետ, զատ յայլոց՝ կային Փռան կաց պետութեան ուսմանց պաշտօնէի յանձնարարութեամբ՝ ի Պահիրէ եղած հնարանական քննողաց տեղեկութիւններ, (Mémoires publiés par les membres de la Mission Archéologique française au Caire). որոց մէջ կայ (Գ. Պրակ Գ հատորի. 1890) ճոխ գրուած մ'այլ, Պոզոս Ռաւէս դիտականի, Մաքրիզի արար հեղինակին՝ Պահիրէի տեղագրութեան վրայաք. (Essai sur l'Histoire et sur la Topographie du Caire, d'après Makrizi. p. Paul Ravaisse). Երանօթ է և յիշած այլ եմք, որ այս բազմահմուտ արարացի հեղինակն (յատուկ անուամբ Թաքիատին) ԺԵ դարուն առաջին կիսով կու գրէր (+1441-2). շատ գրքեր քննելով և շատ ծերբու հարցընելով, Եգիպտոսի՝ և առանձինն աւոր մայրաքաղաքի (Պահիրէի) վրայաք՝ այնքան ծանօթութիւն ժողոված է՝ որքան ոչ ոք, և երկար համբերութեամբ մանրամասն ստորագրած է. բնագիրն՝ որ խիրաբ (Տեղալ գրութիւն) կուրի, արդէն տպագրուած է ի Պուլազ, յամի 1853. ամբողջ Թարգմանութիւնն այլ սկսուած է տպագրել, ի՛նչ մասամբ՝ արդէն ծանօթ էր արեւելագիտաց: Սպասելով հրատարակման ամբողջական Թարգմանութեանն, առ այժմ Ռաւեսայ գրածէն կ'ուզեմք աւելցնել, Աբուսահլի և մեր յիշած ազգային եգիպտական վզըրկաց վրայ՝ քանի մի տեղեկութիւն այլ:

Արարացոց Եգիպտոսի նոր մայրաքաղաքն՝

Պահիրէ՝ շինուած է իբր ի վերջ Ժ դարու, (970 փրկական թուին). մէկ մասին (վաճառափողոցի) շինող կըրնայ ըսուիլ նոյն ատեն՝ ուրացեալ զօրավարն Վարդան, որոյ անուամբ յիշուէր շէնքն շատ դարեր, և դեռ լսուի այդ անունն (կամ նոյն իրեն կամ ուրիշ անձին): Անէկ դար մի վերջը՝ (107) իր համապգի մեծահամբաւ և զօրաւոր վզուրկն Պատրէլ-ձամալի էմիր էլ ձիւրիչ՝ նորոգելով մայրաքաղաքը, իր մեծութեան և խալիֆայից զօրութեան յարմար՝ նոր և մեծ վզըրկարան մի շինեց (Տար էլ-Վիգարահ) ի Պէրձուան անուանեալ Թաղի, որ յետոյ դեռսպանաց ընդունարան եղաւ, և այնպէս այլ կուչուցեալ (Տար էգ-դիլաֆաթ)՝ իր մեծագի և գոռոց օրդին և յաճորդն Շահնշահ, որ խալիֆայէն տելի փառք և զօրութեամբ կ'ապրէր, զո՛ր շեղաւ իւր հօր շինածովրայլ արքունեաց և պետական շինուածոց հիւսիսային արեւելեան անկեան ընդարձակ կողմ մի գրաւելով, իբր 15 քառակուսի բնամկոթ (քրիւկետր), շինեց հոյակապ ամենաճոխ նոր վզըրկարան ապարանք մի, որ իր արարական անուամբ կուչուցեալ Տար էլ-Սիֆայիյէ, և շէնքին գմբէթներուն համար՝ սովորաբար կուչուէր Տար էլ-Քուպպա (Պմբեթաւոր) 3 ա-

1. իր շինածներէն ժայած է դեռ Զուէրկա կուշուած մեծ դուռն, քաղքին նարաւարեւելեան կողմը:  
 2. կերպով մի խալիֆայ ժամանակին երախտապարտ էր Շահնշահի. ստոր կայն և Մուզանգիր խալիֆայն մէկ արտուն (1094) մէկ մեռաւ. Եղիպտոսիք փոխանակ սմոր Նիզար անգրանկան՝ երկրորդ օրդին (Մուքալի պիլաւ) ընտրեցին. Աֆապին մեծ էմիրն ուղեց զաշապանեւ Տիլզար. Շահնշահ զեմ հաւ, յաղթեց, շերկեց ուլ բռնեց, և ապաւովեց զՄուզալի:  
 3. Միթէ պապիսի վայելութեան՝ եթէ բողանեացն համար էր՝ որ Աստուայի մտօրի տեղ մի Պմբեթաւոր կուչուէր, փեճին Լուսի օրերէն ինչուան իր յաշտոցայ վերջն այլ. (Տ. Սիւտան, 64. 533. 541):

պարանք), և աւելի յանախ՝ Տար էլ-Ղէգի-  
րահ էլ ֆուպրա. Շահնշահի ամենայն յաղորդ  
վորակք՝ մինչև ի բարձունն խալիֆայութեան  
և ի տիրապետութիւն Սալահատին սուլ-  
դանի (1174), այս նոր վզըրկարանի մէջ բը-  
նակեցան. նոյն ինքն Սալահատային այլ և իր  
առաջին չորս յաղորդք՝ մինչև ի շինութիւն  
նոր արքունեաց : և այսոր համար վզըրկա-  
տունն այլ այն ատեն (1174-228) կոչուեցաւ  
Տար եւ Սարդանիէ. յետոյ Շահնշահի շքեղ  
չէնքն այլ իր հօր շինածին պէս՝ Դեսպանաց  
բնակարան կարգեցաւ, մինչև ի վերջ ԺԳ  
դարու. անկէ վերջը այլեւայլ իշխանազունք  
և պաշտօնեայք զնելով այդ բնդարձակ ապա-  
րանքը՝ իրենց նաշակին համեմատ ձեւացու-  
ցին, մասն մասն քակեցին, նոր շէնքեր կանգ-  
նեցին. բայց մինչև ի ԺԵ դար այլ կ'երեւ-  
ւէին հին շէնքին մասեր. գուցէ դեռ շոշորդ  
մ'այլ նշմարուի :

Հիմակունս տեղագրութեամբ՝ այդ վզըր-  
կարանին արեւմտեան կողմն է Պապէէն-Նասր  
փողոցն. արեւելեան և հարաւային կողմն՝  
Մապիլխատ փողոցն. հիւսիսայինն՝ Ճուվվա-  
նիյէ : Շահնշահի դաստակերտն բոլոր քա-  
րաչէն էր և լաւ յղկած, այլեւայլ դատիկոն-  
ներ և յարկեր բաժնուած. բազմաթիւ սրահ-  
ներ և սենեակներ, պարտէզներ, բուրաս-  
տաններ, աւազաններ, և այլն, որոց ամե-  
նուն լուր հասցընելու համար՝ 120 ազուգայք  
յարմարած էին : Ապարանից ամենէն նշա-  
նաւոր և թանկ մասն կամ տեղին՝ էր գան-  
ձարանն, (թագիեա), խալիֆայից գանձատան  
նման, աւելի կամ պակաս հարուստ. ուր  
Շահնշահ և յաղորդքն՝ ոչ միայն ոսկի և ար-  
ծաթ, գուհար և դիպակներ, այլ և պէսպէս  
չքնաղ արուեստագործ նիւթեր ամբարած  
էին. որոց զինն և գումարն՝ սովորական ու-  
նով՝ բայց իրաւամբ կըրնայ բուսիլ՝ անբաւ  
և անհամար. արդէն յիշած եմք այլուր Շա-  
հնշահի սպանման ատեն՝ իր գանձատան  
մէջ գտուած միլիոնաւոր ոսկին : Այս չքնաղ  
և անգին նիւթոց ամենէն երեւելին կըրնամք  
բուի՝ Եուպպաքը (الجمال) . այսպէս կու-  
լուէր այն վանդակապատը՝ որ խալիֆայից  
ատենական դակիբը կամ մեծ սենեակը՝  
յերկու բաժնէր. մեծագոյն մասն կուլուէր  
էր-Քաան, ուր կենար ամէն ոք՝ որ տէրու-

թեան պետին պիտի ներկայանար. իսկ սա-  
բազմէր միւս մասին մէջ՝ որ կոչուէր էլ-  
Մարքուրա : Պատմեն, թէ քանի որ այս սու-  
վորութիւնս չէր եղած, օր մի իւմմիստաց  
նահապետ Մուավիէ խալիֆայն՝ Դամասկոսի  
մզկըթին մէջ սըրոյ հարուած մի բնդունելով,  
հնարեց այս միջարգել շուպպաը, որ Պաղ-  
տատի Ապպասեան աշխարհակալ ամիրապե-  
տաց դահլըճին պատուարն եղաւ, և որոյ  
դիմաց պատկառանք և վախով կենային Ա-  
սիոյ՝ (և երբեմն Եւրոպոյ) ամեն պետու-  
թեանց դեսպանք և իւր յատուկ տէրութեան  
պաշտօնեայք. և ինքն ահարկու ամիրապետն  
(խալիֆայն) ներսը ի մաքսուրայն՝ բարձր  
գահու վրայ բազմած և ծածկուած, վճռական  
պատգամները կու հրամայէր : ԺԱ դարու կի-  
սում մեծ շփոթութիւն և ապստամբութիւն  
մ'եղաւ ի Պաղտատ, և ամիրապետն (էլ-  
Քայիմ) փախաւ. այն շփոթից ատեն ամբիւ-  
արարք կողոպտեցին արքունեաց կահն ու  
գանձը, և զրկեցին Եզդիստոսի խալիֆայից.  
երբ Սալահատտին տիրեց ասոնց գահուն,  
Պաղտատէն կողոպտուած թանկագին իրերն  
այլ դարձուց անոր ամիրապետին. ասոնց  
թուէն էր այդ երկդիմի բաղդի վարազոյր  
շուպպաքն այլ, երկաթէ զարբնած շատ ձար-  
տար արուեստով վանդակն, հաւանօրէն՝ ա-  
ւելի ազնիւ մետաղով օժուած և զարդարուած :  
կամ մեծութեանն համար, կամ իրեն յար-  
մար համարելով Սալահատտին շարժեց  
զայս տեղէն. իսկ տեղն էր շքեղաշուք Շահն-  
շահի դակիթն կամ ատեանն. ուր, նմա-  
նելով տիրապետ խալիֆայից, իր մեծութեան  
և իրեն դիմողներուն միջաբաժին կանգնել  
էր այդ նշանաւոր շուպպաքը : Երբ յետ ժա-  
մանակաց՝ Պարսսոնքոր էմիրն՝ Շահնշահի  
սպարանից գետնին վրայ շինեց իր հոյակապ  
շիրիմը, անոր մեծ պատուհանին վանդակ ը-  
բաւ շուպպաքը կամ ասոր մէկ մասը. շիրիմն  
կանգուն կայ մինչև այսօր. բայց այն պա-  
տուհանն պատով հիւսուած է, և չի գիտ-  
ցուիր թէ արդեօք հօն ծածկուած մնայ այն  
խորհրդաւոր վանդակն, որ Շահնշահի ճո-  
խութեանց գլխաւոր մէկն եղաւ :

Իրմէ վերջը իր գանձարանին մէջ պահուե-  
ցաւ պճօրիլը հաւաքում մ'այլ. — թագի-  
կաւ էր—բաւուր, այսինքն, գանձ (կտրած)

զխոց! երեւելի իշխանաւոր անձանց. որոց առաջինն եղաւ Ատիլ իպն—Սալար վզուրկն, յաջորդն Ռոտովանի: Ի կարգի պատմութեան Աւետարանի յիշուեցաւ այս ետքինս գործը, և մեր Պաշտօնաւորն Վարդանին նախ դիմաւ դրուծիւնը, ապա յետ քաշուինն. Մաքրիդի՛ որ զսա Յազարաց թագ կոչէ, թա՛ն էլ Մուշոք, ապէ՛ առաջ և յետ Ապու Ալի Ահմէտի՛ Եահնշահի որդւոյն՝ (զոր և Քարթրաք կոչէ), ուրիշ հայ վզուրկ մի եւս յիշէ, Եւհնա Նագիր—էլ ճիշտ անուամբ, (1131+4 միջոցք) որ զուցէ նոյնպէս Եահնշահի որդի մի էր, և նոյնպէս բռնամակ եղած է: Ասոր յաջորդին յաջորդն էր զԻսաաեան Ատիլ (1153). ասոր այլ յաջորդ Ապպաս իպն Ալի՛ Ֆութուհ, խոտուութեան ժամանակ. զոր դադրեցուցեր է զորաւոր Հայ մի, Ապու՛ Ղալաթ թայայի կոչուած, և եօթն կամուխ տարի (1154—61) նստեր է վզուրկ. բայց ինքն այլ սպանուեր է. սակայն յաջորդեր է իր որդին Ապու խօձայ Ռուզէթը՛. որ՛ չգիտեմ ինչպէս վախճանած է: Մաքրիդի յիշէ ասոր կամ իր հօրը շինած զեանափոր տեղ մի՛ հանդերձ փականօք՝ վզըրկանոցին մէջ: Սա յետին հայազգի վզուրկ եղած է՝ ի կարգի եօթնանց՝ որք դար մի ժամանակի գրեթէ երեք մաւսին՝ այդ զերազոյն եգիպտական զահլը բազմեր են, բազդով կամ քաջութեամբ, օտաւ

բաց մէջ, օտարացեալք ի հայրենի հաւատոց, բաց ի Վախրամայ. մինչ ի նմին ժամանակի (ԺԻ դարու.) իրենց պրաւած երկրից գրեթէ սահմանակից երկրի (Կիլիկիա) մի մէջ, հաւատարմ՝ ազգակիցք (Ռուբրիեանք) Տօրոսի քարուտ կողերը մազըցելով՝ ոտն առ ոտն առաջ անցան, իլան կոտելով ու կորզելով և լեռ և դաշտ և ծով, և կանգնեցին իրենց տուն և տէրութիւն. և երկար տարիներ Սալահատտինի յաջորդ քուրդ և մէմլուք սուլտանաց հետ զորակցութիւն ունեցան՝ բարեկամաբար և թշնամաբար. որոց՝ վերջապէս նուազած և նուաճուած՝ թողին իրենց ուկիներով և օսկորներով լի և դատարկ երկիրը. բայց թէ հօն և թէ զուրը՛ թողին նա եւ մշտաւոր և հեշտաւոր համբաւ մի. մինչ այդ ընդվզեալ վզըրկաց անուանքն՝ հապու նշմարունի ի զիրս. և թէ քրքրեց զմիտս, զի զրգուն զսիրտս. նա և տարխտան զարմանք մ՛ազդեն, երբ միաժամանակ և իբր ի միում թատեր, դէմ ընդ դէմ երեւին՝ այն Միխազետաց և Կիլիկիոյ Հայ իշխանք՝ ձեռնտուք, և այդ վզուրկքդ՝ հակառակողք խաչակրաց: Պատմիչք և երգիչք յեանոցս՝ հարկ էր որ յիշէին անոնց անունը կամ զործն եւս: Պատմութեան այս ամենամեծ մէկ դէպուածին ատեն (Խաչակրաց Երուսաղէմի տիրելուն), Եգիպտոսի վզուրկ էր վզըրկաց զոռոզագոյնն՝ Եահնշահ, միանգամայն և զօրապետ և ամենապետ. հարկ էր՝ որ թէ ոչ անձամբ՝ երեսփոխանով մի ելնէր անոնց դէմ. և ահա այս նոր դիւցազանց զովասանից դասապետն՝ Գասոյ, (որոյ՛ յանկարծ մահուանէ զրկած զերդողայաղթ պսակն՝ այս տարի (1895), փառաւորապէս տրուեցաւ ի յիշատակի իր 300ամեայ յոբելինին), իր դիւցազին (Կոփրետոսի) արժանաւոր դիմամարտ հաներ է զՀայն Էմիրին. որ՛ յետ ամենայն ջանից և քաջութեանց՝ խցելով զմեծն այն Բույլիոն (Կոփրետոս, il maggior Buglione), ինքնին կանչէ, « Ահա կու գամ քու ձեռքէդ մեռնելու » .


Ecco, per le tue mani a morir vegno.

ինչ որ պատմիչ մեր (Մ. Խորեն.) փափագէր իր հին դիւցազին (Չարմայրի) համար. « Կաւ


1. Չաւ և իր որդին՝ Չարեկ կամ Չարեկ անուանելով յիշած էինք ի՛նչ. Ենորե. և Պարազայն իւր թաւալէ՛ հրօսական հանդ զորն մի ըրած էր Եգիպտոսոց. ասոնք զաւտուութեամբ պարսկազնն իւլամ էին, այսինքն չէի. որոց, ինչպէս յայտնի է, մեծ պայտաւք և զատուելիք են Ալի ամիրտպետին նախատակ (ամառու բուռն ուղիքն, Հասան և Հիւսէյն. հարիւրն զլուրին՝ երբ և է՛ մկապաղծ բերուած պահուեր, երբ յաշապէրք եկան այս կողմերը. Եահնշահ զայլով յայս քաղցս՝ այդ զուրը նորէն զըրուսի տուաւ, և վրան մաւառաւ մի շինեց. բայց Եգիպտոսեցի մեռա կասկածէն թէ որ մի լանաբզն զայն քրիստոսեայց: Հիմոյ թաւալէ յորդորեց զխալիֆայն, և հարտարութեամբ վերգընել տուաւ մկապաղծն և բերել ի Գաւիթը (1133), ուր մէկտէր մ՛այլ շինեց (ձամի Սայի) և հնգ կուրքեր զինէ. բայց ժողովուրդն ստիպեց որ (Գուզլէթ ԷտաՏայլամ կոչուած) համարակաց մէկըթիւ մէջ դրուի. որոյ զմեթիս այլ նորոգելով կոչեցին Մուշաւ Հիւսէյն չէ. որ իբր զար մի վերլէ՛ (1242), հրդեհով քուրդովն սպրեցաւ:

» միմ' ՍԱՔԻԱԼԵԱՅ, և մի յայլ ումեքէ ի  
» քաջացն » : ... ԱՔԻԱԼԵԱ և ԿՈՒՐԻԵՍ. Չար-  
մայր և Էմիրէն. Տրոյա և Երուսաղէմ. Հո-

մեր և Դասսոյ! Ինչ զարմանալի զուգարտու  
թիւնք պատմութեան և երեւակայութեան :



# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ



ՍՐՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ

ԵՒ ԱՌԱՆՁԻՆ ԼԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՂ

(Տես յ'էջ 297)

Ե



ԲՊԻՍԻ՝ հոգեւոր զմայլմամբ և  
հանդիւք մուտ կը գործենք այն աշ-  
խարհը որ մերն է, և որ քրիս-  
տոսական հաւատոց և երկնաւոր  
վարդապետութեան նախկին ընկա-  
լուչ և սիրալիր օթեւանն եղաւ : Քաղցր և  
մեր հայրենեաց մեծապէս պատիւ ընող աւան-  
դութիւն մը, խորենացող ատենէն ի վեր,  
մեզ և մեր ազգին վրայ իշխողին կը յատկացը-  
նէ աւետարանական պատմութեան սրտաշարժ  
մէկ էջը, յորում արմաւենեաց օրուան մար-  
գարէադաշակ յաղթանակաց ատեն, ապի-  
բախտ և անշնորհ ժողովրդեան մը կողմանէ,  
որ միայն քանի մի օրուրնէ ետքը՝ անար-  
գական խաչի մահուան պիտի դատապարտէր  
զՔանն մարդացեալ, անձինք ոմանք ի հե-  
թանոսաց՝ պատկառանօք և հաւատքով իրեն  
կ'ուզէին մօտենալ, փափաքելով հետը խօսիլ :

Արգարու՝ Եղեւիոյ ու մեր թագաւորին  
կողմանէ եկած պատգամաւորութիւն մ'էր  
այն, կ'ըսէ պատմութիւնը :

Կը հասնին իրենց փափաքանացը. հաւա-  
տոց, մեծարանաց և աստուածահրաշ սիրոյ  
թուղթ մը կը մատուցանեն առ նա :

Երկրաւոր մեծ թագաւոր մը՝ կը խոնար  
հէր առաջի թագաւորին թագաւորաց : Ու-  
զնա՝ — որ կը հալածուէր, կը նախատուէր  
և յաշխարհէ վերցընելու ամէն ջանք ու փոյթ  
կը բանեցընէին, ատելով իւր բերած լոյսն  
ու փրկութիւն, և այդ աստուածամարտ ա-  
տելութեան շինդն ու համբաւ հասեր էր  
մինչ յեղեւիա, — առ ինքն, իւր արքու-  
նիքը և աշխարհը կը հրաւիրէր Արգար; և  
իրմէն՝ մարմնոյ ու հոգւոյ առողջութիւն հայ-  
ցելով, քաղաք մը ամբողջ՝ անկարօտ աս-  
տուածորոյն տրամադրութեան ներքե կը  
գնէր, որոյ են երկինք և երկիր, և չէր կըր-  
ցած զանեղ իւր ձեռակերտ աշխարհին մէջ՝  
պուխը գնելու սեղ մը :

Սուրբ աւետարան կ'ըսէ՝ Թէ Փրկիչն այս-  
չափ սիրահրաւէր պատգամաւորութեան մը  
առջև չուզեց ունենալ ուրիշ խօսք մը, բայց  
զոհութեան աչք մը յերկինս վերցընել առ  
Հայր և ըսել. Եհնաս ժամ զի փառաւորեցի  
որդի մարդոյ :

Լաբուրիա, առաքելական դարուց դրիչ,  
և իրմէ աւելլով՝ ինչպէս հանրածափօթ է,  
Եւսեբի և խորենացի, և առաջինն հաւանա-